2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դասղեկի **անուն, ազգանուն, հայրանուն**	Վանուհի Վանիկի Եղիշյան
Դպրոց	Երևանի Ա. Պուշկինի անվ. հ. 8 հիմնական դպրոց
Դասարան	7ե

Դասարանի աշակերտների թիվը՝ 34

Աղջիկների թիվը՝ 16

Տղաների թիվը՝ 18

Դասարանի նկարագիրը

Ուստարին դասարանն սկսեց 33 հոգով, ավարտեց 34 հոգով:

Դասարանը ընդհանուր առմամբ յազմակերպված, կարգապահ և հանգիստ է: Երեխաները համերաշխ են: Աշխույժ են և հետաքրքրասեր: Տղաներն ավելի շատ են, քան աղջիկները: Տարիքին բնորոշ որոշակի աշխուժություն է տիրում դասամիջոցներին:

Երեխաները հիմնականում գտնվում են ծնողների ուշադրության կենտրոնում:

Մեծ մասը հաճախում է մարզական, երաժշտական, գեղարվեստական խմբակների: Արագ կազմակերպվում են և բավական ինքնուրույն են:

Դասարանում կա մեկ գերազանց առաջադիմությամբ աշակերտ, յոթ հարվածային, մեկ հատ վեց ունեցող յոթ աշակերտ, ետ մնացող աշակերտ չկա:

Դասարանի ավագին հանձնարարված աշխատանքներ:

(Այստեղ գրե՛ք աշխատանքի թեման և ամսաթիվը):

Դասարանի ավագը գրանցում է բացակայությունները, մասնակցում է աշակերտական խորհրդի նիստերին, հետևում է դասասենյակում իրականացվող հերթապահությանը: Ավագի պարտականություններն աշակերտն իրականացնում է մեկ կիսամյակ:

Խնդրահարույց սովորողների հետ տարված աշխատանքներ:

Դասարանում կան երեխաներ, որոնց հետ դպրոցական կարգուկանոնին հարմարվելու աշխատանքները շարունակական են: Փոխադարձ աշխատում ենք նաև ծնողների հետ:

Աշակերտներին հաճախ հանդիպում է նաև դպրոցի հոգեբանը, սակայն այդ այցերն ավելի ուղղված են խոցելի մեկ երեխայի խնդիրների լուծմանը, և հաջողություններ արդեն իսկ կան:

Ծնողական ժողովներ (ուստարվա ընթացքում):

1. Ժողովը կայացել է 12.09.2022 թ.
   Օրակարգ՝
   1) Նոր ուսումնական տարվա խնդիրները:
   2) Կազմակերպչական հարցեր

2. Ժողովը կայացել է 23.12.2022թ.
   Օրակարգ՝
   1) 1-ին կիսամյակի ամփոփում:
   2) Կազմակերպչական հարցեր:

3. Առցանց ժողով 14.03.2023
   Օրակարգ՝
   1) Դասարանի ուսման և կարգապահության հարցերի քննարկում:
   2) Կազմակերպչական հարցեր:

4. Ժողովը կայացել է 01.06.2023 թ.
   Օրակարգ՝
   1) Ուսումնական տարվա ամփոփում:
   2) Կազմակերպչական հարցեր

Ծնողների հետ կատարված աշխատանքներ (ուստարվա ընթացքում):

(Գրել կատարված աշխատանքների արդյունքները)։

1. Կարգապահության, ուսման և ուշացումների հետ կապված զրույցներ։
2. Հանդիպումներ ծնողների և դասավանդող ուսուցիչների հետ։
3. Հանդիպումներ հոգեբանի հետ։
4. Հանդիպումներ հոգեբանի կարիք ունեցող աշակերտի ծնողների հետ։
5. Հանդիպումներ վարքային խնդիրներ ունեցող աշակերտների ծնողների հետ։
6. Կարմրուկի դեմ կրկնակի պատվաստումների գրանցման և համակարգման աշխատանքներ։
7. Դասարանում առողջ մթնոլորտի ապահովման հարցերի առցանց քննարկումներ։

Կատարված այլ աշխատանքներ (ուստարվա ընթացքում)։

1. Դասագրքերի հանձնում և հավաքում։
2. Բացակայությունների հաշվառում, վերահսկողություն։
3. Առաջադիմության ուսումնասիրում տարբեր առարկաներից և քննարկում ուսուցիչների և դասարանի հետ։
4. Դասալսումներ տարբեր առարկաներից և համագործակցություն գործընկերներիս հետ։
5. Պայուսակներում դպրոցական պարագաների և դասագրքերի առկայության պարբերաբար ստուգում։
6. Դասղեկական ժամերի կազմակերպում։ (ամեն շաբաթ)
7. Բացահայտել եմ հոգեբանի կարիք ունեցող աշակերտներին և կազմակերպել աշակերտ-հոգեբան և ծնող-հոգեբան հանդիպումներ։
8. Դասասենյակի ամանորյա ձևավորում։
9. Ամանորյա անակնկալ նվերներ։
10. Վահանակներ՝ նվիրված Ե. Չարենցին։
11. 120 և ավելի ժամ բացակայություն ունեցող աշակերտների վերաքննությունների հսկողություն։ (հունիս)
12. Լեհաստանում նոյեմբերին կայացած ձյուդոյի Եվրոպայի չեմպիոն դարձած դասընկերոջ հանդիսավոր ընդունելություն դպրոցի բակում։ 18.11. 2022
13. Հայոց բանակի ապագա զինվորներին՝ դասընկերներին՝ նվերներ աղջիկների կողմից։
14. Տղաները շնորհավորեցին և նվերներ ու ծաղիկներ մատուցեցին աղջիկներին Մարտի ութի և Ապրիլի յոթի առթիվ։
15. Համագործակցություն տեխնոլոգիայի ուսուցչի հետ՝ դասարանում խմբային աշխատանքների միջոցով կազմակերպելու և գեղեցիկ ներկայացնելու աղցաններ, թխվածքաբլիթներ և մրգերի ձևավոր կտրատում, հյուրասիրություն թեմաները։

16. Համագործակցություն քիմիայի ուսուցչի հետ՝ կազմակերպելու միջոցառում՝ «Քիմիան ամենուր է»։
17. Համագործակցություն պատմության ուսուցչի հետ՝ կազմակերպելու բաց դաս՝ նվիրված Կիլիկյան Հայաստանին։

Դասարանի մասնակցությունը համադպրոցական միջոցառումներին (ուստարվա ընթացքում)։

	Միջոցառման անվանումը	Մասնակիցների թիվը	Ամիս/ամսաթիվ
1.	Գիտելիքի օր	33	01.09.2022
2.	Անկախության տոն	33	21.10.2022
3.	Ուսուցչի օր	33	05.10.2022
4.	Շապիկների ձևավորման ցուցահանդես-մրցույթ 7-րդ դասարանների միջև	16	15.12.2022
5.	Ամանորյա բարեգործական համերգ-տոնավաճառ	33	24.12.2022
6.	«Գիրքը՝ մեծագույն արժեք մարդկության ստեղծած մշակույթում»	34	20.02.2023
7.	Հայոց լեզվի դպրոցական միամսյակի շրջանակում միջոցառում՝ «Հայերեն են գալու դարերդ» խորագրով	34	05.05.2023

Դասղեկի դաստիարակչական աշխատանքների թեմաները՝

1. «Գիտելիքի օր»: Գիտելիքը ուժ է:
2. Դպրոցական կարգուկանոն:
3. Հիգիենայի կարևորությունը. Սպիտակ վերնաշապիկի առավելությունը:
4. Հոգատար վերաբերմունք շրջապատի նկատմամբ:
5. Նոր տարի, նոր գործեր:
6. Ո՞ւմ նմանվել:
7. Նվիրի՛ր գիրք:
8. Սիրել մայրենին:
9. Ընկերասիրություն:
10. Աշխատասիրություն:
11. Ներել և ներողություն խնդրել:
12. Խոսքի ուժը:
13. Հեռախոս:
14. Ինչ անել արձակուրդի ժամանակ:

Արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ /էքսկուրսիաներ/՝

1. էքսկուրսիա գրականության և արվեստի թանգարան 15.11. 2023
2. էքսկուրսիա ՄիջինԱրևելքի թանգարան 15.11. 2023
3. էքսկուրսիա Ազգային պատկերասրահ՝ Ե. Չարենցի 125-ամյակին նվիրված՝ «Մ Սարյան. գիրք և արվեստ» ցուցադրությանը՝ 08.11.2022
4. էքսկուրսիա Հրաչյա Քոչարի թանգարանում՝ 29.11. 2023
5. ԵՊՀ աստղադիտարանում դասախոսություն ունկնդրում գալակտիկաների և երկնային մարմինների մասին՝ 13.01.2023
6. ԵՊՀ աստղադիտարանում կազմակերպվեց Լուսնի, Բևեռային աստղի, Արուսյակի, Մարսի և Լուսնթագի, Ծիր Կաթնի դիտումներ աստղադիտակով՝ 26.01.2023
7. Մասնակցություն ԵՊՀ նախաձեռնած «Բանուգործ 2023» էքսպոյին՝ նախնական մասնագիտական կողմնորոշման նպատակով՝ 16.05.2023
8. էքսկուրսիա դեպի Վ. Համբարձումյան տուն-թանգարան Բյուրականում 17.06.2023
9. էքսկուրսիա Ամբերդ ամրոցում՝ 17.06.2023

Աշխատանքի ընթացքում հանդիպած խնդիրներ՝

Որոշ աշակերտների և նրանց ծնողների կողմից անուշադրություն կամ թերացումներ՝

Կան դժվարկառավարելի վարքով տղաներ, որոնց հետ շարունակական աշխատանք է կատարվում՝

Հաջորդ՝ 2023-2024 ուստարվա աշխատանքների հեռանկարային պլան

Ընթացիկ առաջադիմություն, կարգապահական և կազմակերպչական հարցեր՝